ցավ ըստ իր կախարդական բարքի, խոնարհություն էր ցույց տալիս, մինչդեռ բոլորին խաբում էր: Փիլիպոս կաթողիկոսի հրամանով նրան աբեղա դարձրին և ուղարկեցին Սևանա կղզին անապատի համար վանահայր լինելու: Մի որոշ ժամանակ մնաց, վերադարձավ Սուրբ Էջմիածին: Կեղծավորելով իրեն ցույց էր տալիս իբրև կատարյալներից մեկը, մինչև որ Հակոբ կաթողիկոսը համաձայնեց և նրան վարդապետական գավազան տվեց, ուղարկեց Տիգրանակերտ[146] քաղաքը նվիրակության:

Գնաց այնտեղ իրեն ցուցադրում էր իբրև առաքինի ու պարկեշտ, մինչդեռ ամենքի սիրտը գողացավ և նրանց համաձայնեցրեց իրեն առաջնորդ պահանջել իրենց համար: Նա հավաքեց այնտեղի նվիրակը և առնելով քահանաներ, պատվավոր մարդկանցից ոմանց, եկան Սուրբ Էջմիածին և ցույց տվին ամիդցիների նամակը, նրանց խնդրագիրը: Իսկ մեծ կաթողիկոս Հակոբը թեպետ գիտեր նրա անզգամությունը, բայց նրանց խնդրելու համար նրան դարձրեց եպիսկոպոս և տվեց մեծ գավազան և կոնդակով նրան ուղարկեց խնդրակների հետ: Նա գնաց Ամիդ և քաղաքացիներից խնդրեց բերել արքունի հրաման: Նրանք գնացին բերին: Իսկ նա այնուհետև բացահայտեց իր չարությունը ըստ գրվածի՝ թե անհնար է, որ օձը թողնի իր թույնը և եթովպացին՝ իր սևությունը, կարիճը՝ խայթոցը: Նույն տեսակ և սա մթերված չարությունը պահում էր իր սրտում, և ժայթքեց իր գարշ սրտից իր պիղծ մաղձը:

Բազմաթիվ թղթեր առնելով կցմցեց իրար և գրեց Էջմիածնի Սուրբ Աթոռին, կաթողիկոս Հակոբին, Աթոռի միաբաններին, բոլոր վանքերին, նրանց առաջնորդներին բազմաթիվ հայհոյանքներ ու անարգ խոսքեր, բարբաջանքներ, սուտ և զուր դատարկաբանություն, անտեղի վայրահաչություն, ինչպես կատաղած շունը իր տիրոջը: Վայրահաչության ավարտին գրել էր, թե ես ձեր գործը գրեցի այս թղթի վրա և տեղ թողի գրելու, որ դուք գրեք ինձ այդ թղթի վրա, ինչ որ իմ մասին գիտեք:

Նամակը ուղարկեց Սուրբ Էջմիածին: Կարդացին նամակը, լսեցին նրա վայրահաչությունները և դրին գրատունը ի պահ, քանզի իմացան, որ այդ գրել է ի կորուստ իր անձին:

Ապա սկսեց մարդկանց վրա վայրահաչել և անզգամություններ անել՝ ոմանց հայհոյելով, ոմանց անիծելով, ոմանց զրպարտելով,

ոմանց միմյանց հետ թշնամացնելով բանսարկություններով: Նաև զազրելի ու գարշելի գործեր էր անում: Բոլոր մարդկանց վիրավորելով զզվեցրեց, այդ պատճառով կամեցան նրան հանձնել իշխանի ձեռքը: Նա իմանալով, որ չարիք է գալու իրեն, գիշերը ջորի հեծավ, գաղտնի ելավ, փախավ՝ իր կայքը պահ տալով: Այսպես ճողոպրեց նրանցից՝ գնաց հասավ Սուրբ Էջմիածին: Զատկի հիսունյակի օրերն էին, իր գոռոզության պատճառով չգնաց կաթողիկոսին ողջունելու, այլ իրիկունը մնաց այնտեղ, գիշերը կամեցավ գաղտնի փախչել և գնալ Երևան: Այս բանը միաբանները իմանալով հայտնեցին կաթողիկոսին: Նրա հետևից մարդիկ ուղարկեց, որոնք նրան հասան Կավակերտ[147] գյուղում: Կամեցավ նրանցից պոկվել, ուստի ջորով ելավ մի տանիք, տունը փլվեց, ինքն ու ջորին ընկան տունը: Գնացին, բռնեցին նրան, կապեցին, նստեցրին ջորու վրա, առան տարան Սուրբ Էջմիածին ու բանտարկեցին:

Կաթողիկոսը թուղթ գրեց վանքերի բոլոր առաջնորդներին՝ գալու դատարան Օնոփրիոսին դատելու: Բոլորը եկան իշխանաշուք մարդկանցով: Այնտեղ էին նաև Աղվանից կաթողիկոս Տեր Պետրոսը և ջուղայեցի փառավոր մարդիկ: Երեք օր հետո չարագործ Օնոփրիոսին շղթայակապ բանտից հանին, կանգնեցրին բազմության մեջ, բերին այն գարշելի գրությունը, որ գրել էր Ամիդից և տվին մի վարդապետի ձեռքը ի լուր ամենքի կարդալու համար: Արևի ծագելու պահից մինչև օրվա երրորդ ժամը կարդացին, բայց նրա վայրահաչությունը չավարտվեց: Պետրոս կաթողիկոսը ասաց՝ այլևս կարդալու ու լսելու պետք չկա այդ գարշելու կեղտոտ խոսքերը, ահա բոլորս լսեցինք դրա հայհոյությունը և կեղտոտ խոսքերը և նամակի մնացած մասը նույնը իմացեք: Եթե որևէ դատապարտություն ունեք, ասեք:

Ապա Գողթան գավառի վարդապետ Խաչատուրը ասաց. «Ով դու լիրբ ու անզգամ, ե՞րբ ես տեսել մեր միաբանների այդպիսի գործերը, որ նման աղբ ես թափել հոտած երախիցդ»: Այնտեղ էր մի ջուղայեցի մարդ, որը հարում էր ինչ-որ հերձվածի: Այդ մարդուն անվանում էին Սև Պետրոս. սա ասում է. «Երբ Փիլիպոս կաթողիկոսը եկավ Սպահան, և սա նրա սարկավագն էր: Մի օր դերձակ Թումիկը գնում էր քաղաք, իսկ սա նրա հետևից հեռվանց էր գնում ու հայհոյում էր: Ես սրա հետևից գնացի և ասացի սրան՝ ո՞ւմ հետ